148 թ. Մանսուր ամիրապետը ուղարկեց Հումիդ ի. Քահթաբին Հայաստան պատերազմելու թուրքերի հետ, որոնք սպանել էին Հարբ ի. Աբդուլլահին եւ աւերել Տփղիս. ի. Քահթաց եկաւ Հայաստան եւ վերայ հասաւ այն ժամանակ, երբ թուրքերը իրանց ուղտերը կը բառնային, եւ որի մնացեց բոլորին։

153 թ. Մանսուր դրեց Հայաստանի վերայ Բակկար ի. Մուսլեմ Օքայլին կառավարիչ։

158 թ. Հայաստանի կառավարիչը գրեց Մանսուրին, որ զօրքը խռովել է Նորա դէմ, ջարդել գանձարանի դրանց փականքները եւ յափշտակել, ինչ որ այնտեղ կար. Մանսուր իւր պատասխանի մէջ հետեւեալ դատաստանն արեց՝ թող մեր յանդիմանութեան արժանի կառավարիչը հեռանայ պաշտօնից. եթէ դու խելօք լինէիր, զօրքը չէր խռովի, եւ եթէ դու թոյլ չդտանուէիր, նա չէր կողոպտէ գանձարանը։

163 թ. Մահդին դրեց իւր որդի Հարունին կուսակալ ամբողջ Մաղրիբի, Ատրպատականի եւ Հայաստանի վերայ, նշանակելով հարկերի վերայ վերակացու Զաբիտ ի. Մուսային, իսկ գործեր վարելու օգնական՝ Եահեայ ի. Խալիդ ի. Բարմակին։

163 թ. Աբդուլկաբիր ի. Աբդուլհամիդ ի. Աբդուլռահման ի. Զէյդ ի. Խաթթաբ արշաւեց Հադալի դռնից։[1] Նորա դէմ ելաւ Միքայէլ պատրիկը 9000 զօրքով, որի մէջ էր եւ Թաղազ[2] հայ իշխանը. Աբդուլկաբիր՝ զգալով իւր նեղութիւնն՝ խոյս տուեց կռուից եւ վերադարձաւ, Մահդին կամենում էր Նորա գլուխը հատանել

---

1 Jakut կ'անուանէ բերդաքաղաք Մալաթիայի եւ Մարաշի մէջ։

2 Այլ ձեռագիր ունի Թարազ (طاراذ) ձեւը, որ Թերեւս Թորոս անուան աղաւաղումն է։